

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆԵՍԻՐԱԳԻՐ
ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻՒՆԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

ԹԻՒ 44

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամերիկահայ թեմը եւ Տ. Մուշեղ եպիսկոպոս
ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Ս. Եփրեմ (Զ.)

ԿԱՅՈՒՆ ԱՍՏՈՒԱՐ. — Ե.

Ուղեւոր գնալ (ընթերցան)

Ազգ. ժողովին (ընթերցան) Կապուտիւնը

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ. — Հայ ազգանուններ

Հայ եկեղեցակ ռեւիւնը եւ «ՏԱՃԱՐ»

ԽՏԱՆՈՒՄՆԵՐ. — Մարդկային հոգին. — Ինքնա-
ճանաչում

Ռուսահայ մամուլ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր
Համագումարին որոշումը

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

Գ. ԳԱՊՒՆՃԵԱՆ

Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔՅԻ

Օ. ՉԻՖԹԷ ՍԱՐԱՅ

ԽԱԶԻԿ Յ. ՍԱՐԱՅԵԱՆ

ՎԱՐԴԱՆՔԶ. ԶԱՔԱՐԵԱՆ

ԽԱԶԻՍԱՐ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
գիմել առ Զարմայր Բախանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեօկքաօ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده «داجار» غزني مديري پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ զանազան իրաւունք ունի մէկ թերթ ձրիստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ՛ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԻ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արաստահմանի համար	» 10 ծրանգ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օսլար
Ձեռքէ կը ծախարի պարսկը	40 փարս

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐԾՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-

նորդ Տ. Արսէն Բէնյ. Դերձակեան

ԱՂԵՔՍՍՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բէնյ. Գա-

բիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-

ղոս Վրդ. Գաֆթանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բէնյ. Պողար-

ԱՏԱՐԱՋԱՐ. — Տ. Սերոբէ ք. Պարմայեան

եան

ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր

Ա. Բէնյ. Տօնէլեան

ԲԱՔԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.

ԲԱՂԷՇ. — Առաջնորդ Տ. Սարէն Ծ. Վ.

Գալէմեան

ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բաբգէն Եսո.

Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բէնյ. Սար-

գիսեան

ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.

Դիմաքսեան

ԵՐՁՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ

Բէնյ. Սրամեան

ՁՄԻՒՌՆԻՍ. — Տ. Յարութիւն Բէնյ. Տ.

Աարգսեան

ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գաբուստ քնյ. Տ.

Գալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջն. Գրիսանորդ Տ. Ներսէս

Ա. քնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիոն քնյ. Այլանեան

ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մուրատեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բէնյ. Վարժա-

պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռակի Բէնյ. Պիպիեան

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բէնյ.

Տատեան

ՈՒՇԱՔ. — Յարութիւն քնյ. Աստարսղեան

ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-

դան Ծ. Վ.

ՊԱՆՏՐԱՄԱ. — ՊԱՆԸՔԷՍԻՐ. — Տ. Կուսմի Բէնյ.

Յիրդաթեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.

Եպիսկ. Կէօմրիւքեան

ՌՈՒՍՃՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մըրջ-

նիկեան

ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ. Տ. Դէորդ Ծ.

Վրդ. Ասլանեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.

Թէօփիլէ Բէնյ. Օտապաշեան.

ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-

պետ Բէնյ. Թուսմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բէնյ. Տրէզ-

եան

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-

եան

ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերոբէ Վ.

Սամուէլեան

ՓԵՔԻՋ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վահան-

պետ Բէնյ. Բիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պասկ Վրդ.

ՅՐԷՁՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 44

ԱՍԵՐԻԿԱՅԱՅ ԹԵՄԸ

ԵՒ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՄԻՍԿՈՊՈՍ

Տ. Մուշեղ Եպ. Նոր Աշխարհ ժամանակէն ի վեր, Ամերիկացիները ունին Առաջնորդական խնդիր մը, որ ամէն շաբաթու աւսպառ նիւթ կը հայթայթէ նոյն գաղթավայրի Հայ թերթերուն: Մենք, շատ հեռուէր հանդիսականներ, կը բաւականանայինք ամփոփ առդերու մէջ ծանօթացնելով խնդրոյն ստացած երեւոյթները՝ Ամերիկայի մէջ, Պոլսոյ մէջ, Էջմիածնայ մէջ, եւ հոսակ ուրեմն Սիսի մէջ, որու Ս. Կաթողիկոսին նամակը՝ ուղղուած էջմիածնի Կաթող. Տեղակալ Սուրենեանց Արքեպիսկոպոսին, առիթ տուաւ մեզ խմբագրական հատուածով մը ըսելու ինչ որ կը մտածէինք: Շատ պարզ էր մեր ըրածը. թերթերուն մը՝ ազգին հոգեւոր բարձրագոյն իշխանութեան, — հնարաւորութեան սահմանին մէջ — գոհացում տալու ժողովրդային փափաքի մը, եւ հրաւէր մը նոյն ինքն Տ. Մուշեղ Եպ.՝ որ իբրեւ խաղաղութեան եւ սիրոյ պաշտօնեայ, միջոց մը գտնէ՝ սիրաշահելով հանդերձ Ամերիկացի գաղութը՝ բարձր բռնելու

Ազգին հոգեւոր վերին իշխանութեան բրեւքիժը, առանց որու չպիտի կրնանք գտնել ազգային միութեան զօրաւոր կապ մը:

Տ. Մուշեղ Եպիսկոպոս, որ ասկէ առաջ համոզում գոյացուցած է եղբր թէ «Ազգային հոգեւոր վարիչներուն հրաժեշտ տուած է ողջմտութիւնը, եւ արդարութիւնը սպաննուած», մեր այս առդերուն վրայ բռնադատուել է «այնքան յոռեհալ չըլլալու»:

Ն. Սրբազնութեան գաղափարներուն այս հրաշալի փոփոխութեան շարժառիթը փնտռելով, կը տեսնենք թէ Տաճարի խմբագրութիւնը անոր համար միայն «ողջմտութենէ զուրկ» եւ «արգարութիւնը սպաննող մը» չի նկատուիր, որովհետեւ, Ամերիկացի կարգ մը թերթերու հրատարակութեանց վրայ հիմնուելով, զրած էր թէ «Տ. Մուշեղ Եպ. կրցած է ժողովրդականութիւնը շահիլ Ամերիկայի մէջ եւ իր հաւատքէն ու ծագած ժողովուրդը մօտեցնել իր դարաւոր Ս. Եկեղեցիին»: Մտածելու այս եղանակը — անշուշտ պատուաբեր Տաճարին համար — լայնախոհութեան նմոյշ մը չենք կրնար նկատել զմեքստաբար Ն. Սրբազնութեան համար:

Ինչ անքաւելի մեղք գործած են արդ-
եօք մեր ազգային հոգեւոր վարիչները՝
«ոգնմտութենէ զուրկ, արդարութիւնը
սպաննողներ» նկատուելու համար : Արդ-
եօք անո՞ր համար որ Ամերիկահայոց Ա-
ռաջնորդական ընտրելեաց եռանուն ցան-
կին մէջէն երջանկայիշատակ Իզմիրլեան
Ս. Կաթողիկոս ջնջած էր իր անունը եւ
ուրիշ մը դրած էր անոր տեղը, կամ ա-
նո՞ր համար որ Ամեն. Դուրեան Սրբազան,
շնորհաւորելով հանգերձ իր առաջնորդու-
թիւնը Ամերիկահայոց, զիտել տուած էր
թէ իր ընտրութիւնը չի կրնար վաւերա-
նալ, մինչեւ որ Էջմիածին ունենայ իր
կաթողիկոսը, եւ վերջապէս անո՞ր հա-
մար որ ո՛չ Պոլսոյ Պատր. Տեղապահ, եւ
ոչ Էջմիածնի Կաթող. Տեղեկալը չարտո-
նեցին իր պաշտօնավարութիւնը Ամերիկա-
յի մէջ, ոչ իսկ իբր առաջն. տեղապահ,
ճիշտ այն նկատումներով որով հոգեւոյս
Իզմիրլեան Կաթողիկոս ջնջած էր իր ա-
նունը, եւ Դուրեան Սրբազան ըսած էր
թէ չպիտի վաւերանայ իր ընտրութիւնը :
Կը հասկցուի անշուշտ թէ խնդիրը իր
Կիլիկիոյ Եպիսկոպոս ըլլալու հանգաման-
քին վրայ է զլխաւորաբար Էջմիածնի եւ
Սոսյ թեմերու միջեւ. գտնուած խնդիրը
կամ խտիրը, որքան ալ «անջատողական
ամօթալի ոգիի մը» (*) վերադրէ Տ. Մու-
շեղ Եպ., պէտք է խոստովանիլ թէ գրչի
հորուածով մը գիւրտութեամբ լուծուելիք
հարց մը չէ, եւ «Ամենայն Հայոց» եւ
«Մեծի տանն Կիլիկիոյ» կաթողիկոսու-
թեանց միջեւ լուրջ եւ զուլէ երկաթա-
տեւ բանակցութեանց կը կարօտի, վերջ-
նական կարգադրութեան մը յանգելու
համար :

Հետեւապէս խնդիրը այս տեսակէտէն

(*) Մենք ընդմիտական խորունկ հեռատեսու-
մամբ եղած կախադրութիւն մը կը նկատենք Սը-
սական եկեղեցականի մը Կիլիկիայէն զուրս պաշ-
տօնավարել չթոյլտրուիլը, որովհետեւ հակառակ
պարագային շատ մը Մուշեղ Եպ.ներ խոյս պիտի
տային բազմակարգ, աղքատիկ ժողովուրդի մը
ժառանգէ, հանդիստ եւ անձնդիւրութիւն փնտո-
ւու համար օգեղազուարթ արիւնքօններու վրայ, կամ
շքեղ մայրաքաղաքներու մէջ :

միայն դիտելով իսկ, եւ երբէք ի նկատ
չառնելով իր ընտրութեան պարագաներուն
եւ Ամերիկայի մէջ իր հետեւած լնկաց-
քին մասին Ամերիկահայոց առաջն. փոխա-
նորդին, եւ Ազգէն ու Տ. Մուշեղ Եպ.ի
համակիր մէկ երկու թերթերէ գուրս,
ամերիկահայ ուրիշ թերթերու կողմէ —
զորս վերջերս տեսնելու առիթ ունեցանք
— եղած չառ լուրջ առարկութիւնները,
մենք կ'ըսենք թէ Ազգին հոգեւոր վարիչ-
ները անկաշկանդ սղջմտութեան գեղեցիկ
օրինակ մը տուած են, չփութալով վաւե-
րացնել իր ընտրութիւնը, որ զուլէ նոր
առիթ մը պիտի ըլլար Էջմիածնի եւ Սոսյ
միջեւ արծարծելու վճ մը. որուն կար-
գադրութիւնը՝ ամէն պարագայի մէջ՝ յիշ-
միածնի կաթողիկոսի մը եւ ի Պոլիս Պատ-
րիարքի մը ներկայութեան կը կարօտի :

Մտածելու եւ գործելու այն եղանա-
կին մէջ իսկ, որուն նմոյշը Կուստայ մեղ
Տ. Մուշեղ Եպիսկ., մենք կը տեսնենք ու-
րիշ կարեւոր չարժանիք մը՝ իրեն դէմ
բուռն հոսանք մը սկսելուն Ամերիկահա-
յոց մէջ, հակառակ որ իր գրական ան-
վիճելի ազդանքին եւ խօսելու մեծ զիւ-
րութեան շնորհիւ հայ եկեղեցաւար ժողո-
վուրդը կը խնուի ամէն ուր որ բանա-
խօսելու կամ քարոզելու կը կոչուի : Ա-
տիկա՞ն. Սրբազնութեան ինքզինքն մի-
այն նկատելն է ներկայացուցիչ մը ողջ-
մտութեան եւ արդարութեան, անշուշտ
նաեւ ազդանքի եւ հմտութեան : Իրմէ
գուրս՝ բոլոր եկեղեցականներն ալ — գո-
նէ Ամերիկահայոց մէջ — «նիմնովին զուրկ
կը գտնուին իրենց կոչումին արժանաւո-
րութեան, եւ քառոյսական պատասխանա-
տուութեան ոգիէն», ինչպէս կը գրէր իր
հոչակաւոր հրաժարագրին մէջ, եւ «եկե-
ղեցականութեան քնկորներ» են, «եկեղե-
ցական արշակաւան մը» կազմած են ա-
նոնք Ամերիկայի մէջ, ինչպէս կը գրէ՝
Տաճարին ուղղած վերջին նամակովը :

Այս աստիճան արհամարհող թշնամանք
հայ եպիսկոպոսի մը կողմէ՝ ամբողջ եկե-
ղեցականութեան հասցէին, մենք արդա-
րացի չենք գտնիր, ոչ ալ վայելուչ, ոչ
ալ օգտակար նոյն այդ եկեղեցականու-

թեան զարգացման կամ բարձրացման :

Եւ զիտեղի է որ եթէ Տ. Մուշեղ Եպ. այդ արհամարհող վերաբերումը կը ցուցնէ Ամերիկա դանուող այժմուս եկեղեցականութեան հանդէպ, իր Ամերիկահայ Տարեցոյցին մէջ նոյն արհամարհանքը կը ցուցուի սկիզբէն ի վեր Նոր Աշխարհ գաղտնի բոլոր եկեղեցականներու հասցէին : Այն յօդուածին մէջ, զոր արտատպելու թացառաքար կ'արտօնուինք^(*), խնայուած չէ ո՛չ Սարաճեան Եպ.ին, ո՛չ Տ. Մաղաքիա Եպ. Տէրունեանի, ո՛չ Տ. Եղնիկ Կպ. Ապահունիի, ո՛չ Տ. Արսէն Ծ. Վ. Վահունիի, ո՛չ Տ. Թորոս քհյ. Զուգայեցիի եւ ոչ ալ ուրիշ եկեղեցականներու՝ վարդապետ կամ քահանայ : Մէկը «ամկարող» հոչակուած է, միւսը «անհոգ», երրորդ մը «արծաթաւէր», ուրիշ մը «կորույտ զուրկ»^(**) եւն. եւն. : Ի՞նչքը, միայն Տ. Մուշեղ Եպ.ն է ապահովաբար ե՛ւ պարսաճանաչ, ե՛ւ կորույթի, ե՛ւ առաջնորդութեան իրմէ դուրս՝ ոչնչութիւններ եւն աշուշտ բոլորն ալ :

Ինչ պէտք է հետեւցնենք այս ամենէն — Սա՛ թէ խնդիրը չարժեր այն մեծ կարեւորութիւնը որ ստացած է Ամերիկայոց մէջ : Անշուշտ այդ գաղթականութիւնը բազմաթիւ բայց զրուած պատուական Հայութիւնը կանոնաւոր կազմակերպութեան մը պէտք ունի, իր հոգեւոր, բարոյական եւ ազգային պահանջները գոհացընելու համար : Անշուշտ Ամերիկահայը իրաւունք ունի օգտուիլ ուղեւոր Տ. Մուշեղ Եպ.ի նման տաղանդաւոր, կարող, գործունեայ եկեղեցականէ մը . բայց քանի որ ազգին հոգեւոր վարիչները՝ ներկայ պարագաներուն մէջ՝ հնարաւոր չեն նկատեր անոր առաջն. պաշտօնին վաւերացումը, քանի որ իր ներկայութիւնը Ամե-

րիկայի մէջ — մէկ կողմէ ժողովրդային համակիր զոյցերու տոբիթ տալով հանդերձ — միւս կողմէ անհատաւոր վէճերու շարժառիթ կը դառնայ, քանի որ Տ. Մուշեղ Ա., Բարեգործականին մասնաճիւղերն աւելցնելու գեղեցիկ ձեռնարկը շարունակելով հանդերձ, զգոհութիւններ յարուցած է թէ այս կամ կամ կուսակցութեան թմբուկը կը դարնէ ընդդէմ ուրիշ կազմակերպութեանց, ^(*) (ինչ որ ըստ մեզ անհամաձայն է եկեղեցականի կոչումին որ վեր պէտք է ըլլայ ամեն կուսակցութեանէ), ըստ մեզ լաւագոյն է չալնիւզել Տ. Մուշեղ Եպ.իսկի անձին վրայ :

Հակառակ հայ եկեղեցականութեան արդի անկեայ վիճակին, մենք վստահաբար կրնանք ըսել թէ Տ. Մուշեղ Եպ.իսկ. որքան ալ տաղանդաւոր, պերճախօս, դրական անվիճելի կարողութեան տէր ըլլայ, միակը չէ հայ եկեղեցականութեան մէջ, ֆեւմիւսն մը չէ . կարողներէն մէկն է միայն, որ ուրիշներու նման ունի իր առաւելութիւններն ալ իր թերութիւններն ալ : Բաւական է որ Ամերիկահայ ժողովուրդը փութայ կարող եկեղեցական մը ընտրելու իրեն առաջնորդ, գիտնայ բոլորութիւն անոր շուրջը, գիտնայ մասնաւորապէս իր առաջնորդէն չսպասել, եւ ամերիկեան ձեռներեցութեան նշոյլ մը, մասնիկ մը ունենայ. ահա՛ այն ատեն իր առաջնորդին վերին հսկողութեան տակ պիտի կրնայ հիմնադրի կազմակերպութիւն մը յառաջ բերել, հոգեւոր, կրթական եւ ազգային երբեակ տեսակէտներով :

(*) Թերթիս Տնօրէն-Խմբագիրը՝ բոլոր կուսակցութեանց լաւագոյն կողմերուն եւ կանոնաւոր կազմակերպութեան համարող մը ըլլալով հանդերձ, տեսնապէս աւելի՛ համակիր է Սահմ. Բամկավարներուն, որոնց ծրագիրը ամենէն օգտակարը կը նկատէ ազգին՝ ներկայ վիճակին մէջ : Այսու հանդերձ սխալ մէ՛ ըստ մեզ՝ մասնաւորապէս բարձրատեսիւն եկեղեցականի մը համար, այս կամ այն կուսակցութեան կողմը բռնել ընդդէմ ուրիշներու : Ամենքն ալ իր զաւակները պէտք է նկատէ, ինչպէս կը յայտարարէր Ամեն. Գուրեան սրբազան, Ազգ. Ժողովին մէջ ըրած յիշատակելի բանախօսութեամբ :

(*) Նիւթերու առատութիւնը Թոյլատու չէ մեզ ամբողջովին արտատպել այդ ընդարձակ յօդուածը, որմէ ասկայն քաղուած մը ընելու մտադիր ենք յաւաքիկային :

(**) Տ. Եղնիկ Եպ.իսկ. Ապահունիի համար կը գրուի Թէ Ժիր համբաւաւոր ձիրքերէն միմիայն դուրագրգռութիւնն եւ յամուութիւնը մնացած էին :

Առաջ, տիրացու ժողովուրդ մը ենք ո՛ւր որ երթանք. ամենէն քաղաքակրթութեամբ ու գործնական երկիրներու մէջ իսկ ոչնչութիւններով ժամաւաճառ կ'ըլլանք: Ըստ մեզ խնդիրը չարժեր այն կարեւորութիւնն որ կ'ընծայուի իրեն:

Գալով Տ. Մուշեղ Եպի հետեւելիք ընթացքին, անշուշտ սիրով պիտի ընդունի մէկ քանի թեւադրութիւններ: Մենք կը կրկնենք թէ առաւելապէս իր ձեռքն է խաղաղ լուծում մը տալ խնդրոյն, հանդարտեցնել այս դաւաթ մը ջուրի փոխութիւնը:

Անշուշտ չենք կրնար եկեղեցականութեան անքննադատելի տիպարներ հոշակել Ամերիկայի մէջ ապրող բոլոր հոգեւորականներն ալ հաւասարապէս. բայց չենք ալ կրնար ամենքն ալ զեղծանողներ, ոչնչութիւններ նկատել: Աստուծոյ մէջ կան անշուշտ պարտաճանաչներ, խղճամիտներ:

Իր պարտքն էր, իբր ամենէն բարձրաստիճանը եւ տաղանդաւորը, սիրաշահիլ գանոնք: Նոյն իսկ ամենէն վատթար նկարագրի տէր անձերու քով կայ բարութեան, աշխուժութեան նշոյլ մը: Բարձր դիրքի եւ կարողութեան տէր, հոգեբանութիւնը ուսումնասիրող անձերու պարտքն է մարդոց մէջ երեւան հանել անոնց լաւագոյն ձիրքերը, իրեն բարեկամներ, օժանդակներ պատրաստել անոնցմէ, նոյն իսկ ժողովուրդին օգուտին համար:

Ինչ որ ալ ըսուի. Տ. Պօղոս Վ. Գաֆթանեան այսօր էջմիածնի եւ Պոլսոյ կողմէ ճանչցուած հոգեւոր ներկայացուցիչն է Հայոց՝ Ամերիկայի մէջ, եւ բարեկրթութեան գործ չէ հոռմէակտնութենէ դարձած ըլլալը իբրեւ նախատինք մը նեւեղ երեսին (*): Ասկէ՛ զատ մեզ ծա-

նօթ եկեղեցականներու մէջ կը յիշենք Թորոս Զուղայեցի պատուական քննն, որուն համալսարանական հմտութիւնն ու գործելու, օգտակար ըլլալու եռանդը լաւ յիշատակներ ձգած են այստեղ: Ասոնք եւ ասոնց նման բարի կամեցողութեան տէր անձեր իրեն օժանդակ ատնելով, կամ ինք՝ իբրեւ հիւր՝ անոնց օժանդակելով, շատ աւելի օգտակար ծառայութիւններ պիտի մատուցանէր Տ. Մուշեղ եպիսկ, Ամերիկայի Հայութեան:

Մենք, Ուղիւնոսի ազդիւ կողմը ապրողներս, սիրաշահող ընթացք մը կը սպասենք իշին նման զարգացող եկեղեցականէ մը: Ինչ ընել, եթէ Հայ եկեղեցականութիւնը իր ամբողջութեամբ, Մայր-Հայրենիքի մէջ ըլլայ թէ արտասահման, փախաբուսած բարձրութեան մէջ չի գրտնուիր: յանցանքին մեծ մասը ի՞նչ է թէ ժողովուրդին: Իրաւունք ունինք նախատինքի տարափ մը իջեցնել իրեն վրայ. այդ նախատինքը պիտի զօրէ՛ մէկ օրէն միւսը կերպարանափոխել դայն:

Իբրեւ *bonne note* Տ. Մուշեղ Եպի համար՝ ունինք իր գրական բեղուն գործունէութիւնը, իր խօսելու կարողութիւնը, Բարեգործական Ընդհ. Միութեան ուժ տալու եռանդն ու յարատեւութիւնը: Եթէ ասոնց միացնէ շրջահայեցութիւն, սիրաշահող, խաղաղարար ոգի մը՝ իբրեւ ճշմարիտ պաշտօնեայ մը՝ խաղաղութեան Աստուծոյն, ահա այն տաւն — եւ այն ասուն միայն — լաւագոյն ծառայութիւնը պիտի կրնայ մատուցանել այս նահատակ ազգին ու դարաւոր Ս. Եկեղեցիին, որուն հոգեւոր վարիչները «ողջմտութենէ զուրկ եւ արդարութիւնը սպաննող» հռչակել ո՛չ ողջմտութիւն է եւ ո՛չ արդարութիւն, քանի որ ամէնէն ծանր յանցապարտներն իսկ բողոքի բառ մը ունին միշտ զիրենք պատապարտող դատարաններուն դէմ:

ԶԱՐԲԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

(*) «Նուիրակ», ամսօրեայ հրատարակութիւն մը, Վրոն. պաշտօնաձեռք Ամերիկայի, Օգոստոսի Թիւին մէջ գնահատականներ կը կարդանք Գաֆթանեան Վ. ի մասին, Սարահեան Տ. Յովսէփ եւ Ապահոնի Տ եզնիկ Եպ. ներէն: Գոհութեամբ կը տեղեկանանք նաեւ. մէ Նիւ-Եօքք մէջ Նոր Հոգաբարձութիւն մը կազմուած է, անձնուէր եւ եւանդուն գործունէութեան կազմ եւ

պատրաստ: Վերակազմուած է կազմալուծեալ եկեղեց. տիկնանց ընկ.ը, որ նպատակ ունի յատուկ եկեղեցոյ կառուցումը կամ գնումը Նիւ-Եօքքի մէջ: Նոյն Հոգաբարձութիւնը մտադիր էր Սեպտին կիրակնօրեայ կրօն. դասընթացք մը բանալ: Աղուոր, օգտակար ձեռնարկներ են ասոնք, արդիւնք Գաֆթանեան Վ. ի Թեւադրութեանց եւ ամէն շնորհակալութեան արժանի:

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. Ե Փ Ր Ե Մ

Ձ.(1)

Կորնթացւոց Գ. Թուղթին մեկնութիւնը, ինչպէս զիտել կուտայ Գերմանացի նշանաւոր գիտուն Յանս իր կարեւոր մէկ ուսումնասիրութեան մէջ (2), Գ. Գարուն Համաքարաւորին պէս արդէն գործածութեան մէջ էր Ասորական Եկեղեցւոյն կողմէ, որու մասին ակնարկութիւն մ'ալ կայ Ձգօնի մէջ (էջ 561): «Եփրեմի այս մեկնութենէն, կ'ըսէ Յանս, յայտնի կը տեսնուի նախ որ 360ին Եգիպտոյ Եկեղեցւոյն մէջ ալ այս անվաւեր թղթակցութիւն այն դերն ունէր, ինչ որ կը գտնուէր արդէն Հայ Եկեղեցւոյ մէջ:» Եփրեմ մեկնելու ժամանակ այս անվաւեր դրուածքը, երբէք ուշադրութեան չէ առած զրքին հարադատութիւնը, անոր ոճն ու լեզուն, եւ իր մեկնած Կորնթացւոց միւս թուղթերուն հաւասար արժէք մը տուած է: Միանգամայն արհամարհելով իր ժամանակին Եգիպտոյ մէջ գտնուող Գրնոստիկանները, ուղած է անոնց դէմ զինուորի, որոնց զիտական եւ քննադատական ողին անտրանալի էր անշուշտ, չնորհիւ բազմամուտ Բարդամանի որ անոնց կ'առաջնորդէր իր բազմաթիւ կրօնական եւ իմաստասիրական գրուածներով, եւ չէր ուզիր վաւերական ճանչնալ առաքելոց թուղթերը:

Բարդամանի վրայ գրուած բազմաթիւ ուսումնասիրութիւններէ ծանօթ է (3) թէ այս աղանդապետը եւ իրեն հետեւողները քիչ մը գմկամակութիւն ցոյց կուտային նոր Կտակարանին դէմ, ուր կը քննադատուէր իրենց նորաուուտ վարդապետու-

թիւնը՝ քրիստոնէական բոլոր խաւերուն մէջ, եւ Աստուածաշունչի նկատմամբ արտաքին քննադատութիւն չէին ընդուներ: Եփրեմ խիստ լեզուով կը խօսի ասոնց դէմ երբեւ հերետիկոս եւ Եկեղեցւոյ խաղաղութիւնը վրդովողներ, որոնք Հոմարի կայսրերուն քրիստոնէութեան դէմ յարուցած հալածանքներուն չափ վտանգաւոր եղած էին քրիստոնէական նորակազմ Եկեղեցւոյն: Բարդամանի հետեւողները շարունակեցին իրենց Գնոստիկան վարդապետութիւնը Եգիպտոյ մէջ, եւ եղաւ ժամանակ մը որ, ինչպէս տեսանք, Եգիպտոյ քրիստոնէական Եկեղեցին բոլորովին վտանգուեցաւ, մինչեւ որ Ե. զարուն Եգիպտոյ նշանաւոր եպիսկոպոսներէն Ռապուլաս կրօնական խիստ քաղաքականութեան մը հետեւելով բոլորովին ջնջեց Գնոստիկան աղանդաւորներուն հետքը(1):

Հ. Յ. Տաշեան իր շահեկան մէկ ուսումնասիրութեան մէջ երկարօրէն քննելէ յետոյ, սա եզրակացութեան կուգայ թէ Կորնթացւոց Գ. Թուղթին բուն բնագիրը Յունարէն լեզուով եղած պատմագրութիւն մըն է, ուրիշ առնուած են Ա. 1-6. Բ. 1-5. Գ. 1-22 աղերը գրեթէ նոյնութեամբ: Եւ որովհետեւ թուղթը Գնոստիկանց դէմ ուղղուած էր, մանաւանդ Բարդամանի որուն պործունէութեան բուն թուականը 200ին եղած է, ուրեմն Տաշեան կ'եզրակացնէ թէ այս թուղթը յունարէն բնագիրն վրայէն Ասորական լեզուին թարգմանուած եւ կանոնական թուղթի մը վերածուած է, եւ այն յոշնարէն գրուածքը որուն գոյութիւնը կ'ընդունին Լաբրոզ գաղղիացին եւ Հ. Յ. Տաշեան, եղած է Պրաւիս Բալիոն (Գործք Պօղոսի) խորագրով չինծու պիւք մը, անծանօթ հեղինակի մը կողմէ ղրի առնուած, ինչպէս կը հաստատէ Յանս, եւ Գ. ու Գ. գարեբուն մէջ համանուն Գործք Առաքելոցին չափ յարգ ու արժէք ունեցած է Ասորական շրջանակներու մէջ:

(1) Եար. Յրդ. Թիւն եւ վերջ:

(2) Տես «Հետազոտութիւն Հին Եկեղեցւոյ Ս. Գրոց կանոնական մատերուն պատմութեան վրայ» Գերմաներէն լեզուով գրուած 1881-1883

(3) Վերջերս կարգ մը Գերմանացի գիտուններ ընդարձակ գործերով ուսումնասիրեցին այս Գնոստիկան աղանդապետը:

(1) Որքան որ Գնոստիկանները ջնջուեցան, Ռապուլասի յաջորդ Իրաս եպիսկոպոս Նեստորականութիւնը ընդունելով խոզից Եգիպտոյ Եկեղեցին:

Այսպիսի դրութեան մը — որ Բիւզանդական մատենագրութեան անձանօթ կը մնայ — մեծ յարգ զանկը ունի իր զըլխաւոր շարժառիթը, որ է իր բովանդակութեան հակադնոստիկեան ըլլալը՝ իբրեւ պայքարող ոյժ Ասորիներու ձեռքին մէջ, որոնք առաջին քանի մը դարերուն մէջ շարունակ կոուեցան Միջագետքի մէջ որէ օր բուսնող ալլաղան ու այսպիսին աղանդաւորներուն ղէմ։ Ուստի Եփրեմի մեկնութիւնն ալ մեծ դրաւական մ'ըլլալով, Ասորական Եկեղեցւոյն հետ անշուշտ Հայ Եկեղեցին ալ պարտաւոր էր ճանչնալ զայն, ղէթ իրբեւ Ս. Լօր մը զրական մէկ արդատիքը ըլլալուն պատճառաւ(1)։

Գ. Կորնթացւոց թղթոյն մեկնութեան դասած ընդունելութիւնը Հայ մատենագրութեան մէջ, մինչեւ ԺԴ դարուն վերջերը դեռ զգալիօրէն չեւառած է, անշուշտ ոչ բանաբնական հետազոտութեամբ, որովհետեւ 1388ին Սիւնեաց Դպրոցի հոյակապ ներկայացուցիչներէն Յովհան Որոտնեցի (1310-1388) ձեռքով բարձրովն կերպարանափոխուած կը գտնենք. բայց արդի բանասէրներէն ոմանք կը կասկածին թէ արդեօք Որոտնեցի իր աչքին առջեւ այս մեկնութեան Ասորերէն բնագիրը թէ Հայերէն թարգմանութիւնը ունեցած է։ Յամանայն ղէպս Որոտնեցի անտեղեակ էր Ասորերէնի, որուն բուն բնագիրը մինչեւ ԺԴ դար արդէն անհետացած ըլլալով, կը մնար Ոսկեդարեան հայերէն թարգմանութիւնը, որով Որոտնեցի գործածած է հայերէն թարգմանութիւնը, անշուշտ զայն հարադատ ընդունելով, եւ ըստ այնմ հիւսած է իր գործը։

* Մատենագրական այս հակիրճ վերլուծումին մէջ, ուր օրքան կարելի էր աշխատուեցաւ ցայտեցնել Ասորական Եկեղեցւոյ եւ զրականութեան այս փայլուն ներկայացուցիչին զրական ընդարձակ գործունէութիւնը՝ անշուշտ ոչ ընդարձակ

մասնագիտական հետազոտութեամբ, զի ունի բազմաթիւ շահագրգռական զիծեր որոնք Եւրոպացի գիտուններուն մասնագիտական ուսումնասիրութեանց յատուկ են միայն։

Եփրեմ ընածին ու խանդավառութեամբ օժտուած միտք մը կըլած է, եւ կրօնական միտքը միջնորդաւ խորապէս ազդած է իր վրայ. եւ նոյն ազդեցութեան տակ է որ միտքը ներշնչուեցաւ հոսանք մը կը ծորի իր դրչէն՝ ղեղուն ու գունաղեղ։ Վերհայեցողական տեսիլներու եւ յափշտակութիւններու (extase) յանձնուած իր միտքը վեհին ու վսեմին տեսլապատկերովը ճառագայթուած, լիկ գաղափարապաշտութեան բնորոշակ ու լորանկրու մէջ սաւառնած է, առանց մօտենալու. կեանքի գործնական պաղափարներուն, որ մի գուցէ իրապաշտութեան (réalisme) հետ չիման մէջ մանկով, չկրնար իրականացնել յախանական կեանքէն արշալուսող իր ոսկեղօծ կրաղը։

Խորհրդապաշտ այս մեղմամաղձ հակումն է որ առն տուած է երկայնաքան ոճի մը եւ սքողատիք բացատրութեանց, յաճախ միջին ու վերացական, որոնց մէջ անհուներին հեռապատէկերը կը նշմարուի միշտ իր բանաստեղծութիւնները որ տաղաչափուած արձակի կը նմանին, հիմնալիթօրէն օժտուած են լեզուի եւ գաղափարի ճոխութեամբ։ Մէկ խօսքով Եփրեմ միակ շնորհագրական բանաստեղծն է զոր երբեք ունեցած ըլլայ Ասորական գրականութիւնը, եւ մինչեւ այսօր պահած է նոյն կախարդիչ հմայքը, նոյն խանդավառ պաշտումը, իբրեւ բանաստեղծ Սատուածաբան եւ ուղղափառ վարդապետ քրիստոնէական ընդհ. Եկեղեցւոյ։

Այն վարդապետական հարազատ տեսութիւնները, Աստուածաբանական ուղիղ բացատրութիւնները, որոնք կը բարացուցնեն Եփրեմի ճշգրիտ գաւառները՝ համաձայն քրիստոնէական բնոյճաւոր Եկեղեցւոյ ոգւոյն եւ ըմբանումներուն, կարեւոր տեղ մը կուտան անոր՝ ուղղափառ վարդապետներու, Աթանասի, Կիրիլի, Եպիփանու, Կաղիստոսի, Բարսղի եւ Ոսկերիւնի շողափայլ համաստեղութեան

(1) Հայ Եկեղեցին ոչ միայն Եփրեմի, այլ բրիտանական առաջին երեք դարերուն մէջ ազդող Ս. Լարց գրի առած բոլոր ջատագովականները ընդունած է անխափր կերպով։

մէջ, իր հին եւ նոր կտակարաններու մեկնութիւնները կարեւոր տոմարներու եւ գծուած ուղեցոյցներ եղած են Ոսկե-
գարէն վերջ եկող մեր բոլոր մեկնիչներու աչքին առջեւ, որոնք հարազատօրէն ցո-
լացուցած են իրենց գործերուն մէջ եփ-
րեմի ողջամիտ զաւարտարները եւ ուղղա-
փառ անսուքիւնները: Թէեւ արդի գրա-
կան նորանշան երևոյթներուն մէջ եփ-
րեմի մատենադրական ընդարձակ գործու-
նէութիւնը աննշան եւ կամ իր թարմու-
թիւնը կորսնցուցած հանգամանք մը կը
ներկայացնէ, բայց Արևելեան ազգերու
դասական մատենադրութեան մէջ միշտ
նոր ու հետաքրքրական է, ուսումնասի-
րութեան առատ նիւթ հայթայթելով կարգ
մը բանասէրներու եւ հնազանդներու, որոնք
այս կարգի պատմա-քանասիրական ուսում-
նասիրութիւններ իրենց մասնագիտութեան
նիւթ ընտրած են:

Այդ ուսումնասիրութիւններուն մէջ
մեծ տեղ տրուած է եփրեմի գործերուն
հրատարակութեան Հռոմէական մեծ հրա-
տարակութեան, ի վեր շատ տարածուած
են եփրեմի գործերը՝ շնորհիւ Բենեդիկ-
տեան Մարտիրոսներու եւ Աստեմանի:

Մ. Պիքէ 1866ին հրատարակ հանեց
Եփրեմի երգերուն մէկ հաւաքածոն,
S. Ephraemi syri carmina Nisibina խո-
րագրով, որ իր մէջ կը բովանդակէ Նիգի-
պի մէջ խմբագրուած բանաստեղծութիւն-
ներէն զատ, Եփեսոյ եւ Խառանի վերա-
բերեալ երգերը:

Մ. Օլրպէյի հաւաքածոն որ կը
կոչուի S. Ephr emi syri opera, կը պա-
րունակէ երգեր՝ Յուլիանոս կայսեր զմ
խմբագրուած Նիգիպի մէջ, հերետիկոսներու
զէմ ճառեր, մեկնողական հատուածներ,
երգեր՝ գրախափն վրայ, եւ ճառ մը կոս-
տանդիանոսի մկրտութեան վրայ:

Վերջապէս Մ. Լամիի կարեւոր հրա-
տարակութիւնը, զոր պատենութիւն ունե-
ցանք յաճախ յիշելու մեր ուսումնասիրու-
թեան մէջ, կը կրէ S. Ephraemi hymni
et sermones խորագիրը, բովանդակելով
իր մէջ եփրեմի այն գործերը որոնք տա-
կաւին անախ կը մնան, ցրուած Եւրոպա-
յի այլեւայլ մատենադարաններուն եւ մաս-
նաւորապէս Բրիտանական միւնէսթին մէջ:

Գ. ԳԱՊԳԵՆՃԵԱՆ

Վ Ե Ր Ջ

ԿԱՅ ԱՍՏՈՒԱԾ

Ծ.(1)

Նա՛յ Աստուած.— Այո՛, մարդոց եւ ազգաց
պատմութիւնը գայլ կը չայտարարէ:

Ոչ թէ տասը կամ հարիւր տարիներու
պատմութիւնը, այլ, ընդարձակագոյն եւ
ամենակատարեալ նշանակութեամբ, դա-
րերու վրայ երկարաձգուած պատմութիւ-
նը, ինչ որ է խիղճը անհատներու նկա-
րագրին մէջ, նոյնն է նաեւ ազգերու մէջ,
եւ կը ստիպէ հաւատալու մարդոց արդար
Դատաւորին եւ Կառավարչին:

Փրօֆ. Ֆլինթ, իրապէս գեղեցիկ հառ-
ուածի մը մէջ, բարոյական աշխարհի նը-
կատմամբ կ'ըսէ, «Կեանք՝ կեանքի շըղ-
թայուած է, եւ բարիի ու չարի պայքա-
րին մէջ, որմէ կ'անցնի ամէն կեանք,
յաղթութիւնը թէեւ դանդաղ կերպով կը
նշմարտի, բայց ինքզինք կը յայտնէ հաս-
տատապէս ի նպաստ բարիին: Մոլոր թիւնք
կը մեռնին, առաքինութիւնք՝ երբէ՛ք, Մեծ
չարիքներ, որ կը վշտացնեն երբեմն մեր
ցեղը, կը սահին կ'անցնին: Ի՞նչ մեծ բա-
րիք երբէք կորսուած է: Արդարութիւնը,
վերջ ի վերջոյ, անխառնութեան վրայէն կը
քշէ զայն» (չարիքը):

Մարդ պէտք է վախնայ այժմու բա-
րեշնչութենէն: Աստուծոյ օրէնքն է ան:
Այս տեսակ իրողութիւններ՝ միայն կ'օգ-
նեն առ Աստուած հաւատքի: Այս աշխար-
հի մէջ, ինչ դնով ալ ըլլայ, Աստուած Օ-
րէնքն է եւ Օրէնքը՝ Աստուած. քանզի
Ան կը գործէ կեանքի եւ պատմութեան
մէջ, իբրեւ չարատեաց եւ բարեւէր Մէկը:
Լայն խմտտով մը ճշմարիտ է:

Աստուած երկիցքի մէջ է,

Միանգամայն մարդոց հետ:

Մասնաւոր ազգերու եւ ժողովուրդնե-
րու պատմութիւնն կը հասկցուի ճշմար-
տապէս թէ այս միեւնոյն իրողութիւնը
ճիշդ է. նամանուանդ, ճշմարիտ է ան՝

(1) Դ. յօդուածը տես Թիւ 37:

Երբայական ժողովուրդին համար(1)։ Իրենց կրօնքը, օրէնքը, գիրքը, որ վար չի մնար իրենց հին եւ արդի պատմութենէն, կը ցուցնէ յաստուածուստաստաշնորհեալ զարգացում փրօֆ. Բօպէրթսըն իր «Իսրայէլի նախկին կրօնքը»-ին մէջ կ'ըսէ. «Կրօնքը, իրենց ժողովուրդին պէս, երբէք չէ դադարած աշխարհի առջեւ յայանսութեան պաշտօնն ունենալէ, անվերջ կենսունակութեամբ օժտուած, եւ ներդրած է մինչեւ ներկայ ժամանակ, այնքան լայնածաւալ դաշտի մը մէջ, որոյ մասին երբէք երազած իսկ չեն իր առաջին ուսուցչականները։ Խնդիր իսկ չի կրնար ըլլալ պետները, Խնդիր իսկ չի կրնար ըլլալ թէ Յիսուս եւ իր Առաքեալները Աբրահամի հաւատքը ներկայացուցին իբրեւ հիմք իստոնէութեան»։ Իսրայէլի մէջ, ինչպէս աշխարհի միւս մեծ ազգերուն մէջ, տաշնորդող նախնականութիւն մը նշմարուած է, եւ բացորոշապէս յայտնուած՝ դրադոյն հսկող Ձեռք մը, առաջնորդող Էակ մը։ Եւ զարեբու հոլովոյթը այս մեծ ճշ-

մարտութիւնը պիտի անփոփոխ պահէ եւս քան զեւս, թէ աշխարհի պատմութեան մէջ Աստուածային ծրագիր մը կայ։ Պատմութիւնը կոյր ըստեղծում մը չէ, ոչ ալ աշխարհ անդիսակից ուժի մը արդիւնքն է կամ միմիայն քիմիական բաղադրութեան մը արդասիքը՝ առանց մարքի գործակցութեան կամ առանց նպատակի։ Մարդոց եւ ազգաց տոհմին մէջ Արարիչն Աստուած իր նպատակը զուխ հանած է շարունակական, յարաճուն ծրագրով մը՝ այնքան ստոյգ կերպով, որքան ստոյգ է թէ տիեզերք մարդոց օթիւսան ըլլալու համար կազմուած է։ Երկուքն ալ կը յայտարարեն. — Կայ Աստուած մը։

Թարգմ. Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ՈՒՂԵՒՈՐ, ԳՆԱ

Բարեկամս Ե.Թ. Ին



Նա, ըսիր, շնորհիւ համբեր, շուտ գնա, «Ա՛յ մի կենար այս վայրին մէջ ամայի, «Հոս քերթողին ոչ ոք պահ մը կը նայի

«Տառապանքը քեզի բաժին թող մնայ։

«Ուղեւոր մ'եւ, ալ մի կենար, շուտ գնա. «Տես Աշուն է, հաւաքները կը դառնան, «Դուն չ'կրցար վայելի վայրը գարնան. «Խայծող փուշը քեզի բաժին թող մնայ։

«Պանդուխտ մըն եւ անտուն, անտէր շուտ գնա «Մէկը չուզեց քեզի ալ մէկ հանգրուան. «Տես, քու շուրջը ալիքները կը հեւան. «Թո՛ղն ամենի քեզի բաժին թող մնայ։

«Հիւանդ մըն եւ, գարունն անցաւ ալ, գնա, «Մի յուսար Թէ կրնաս ապրիլ ասիէ վերջ. «Քեզ չ'սիրեց արշալոյս մը լուսառէջ. «Վերջալոյսը քեզի բաժին թող մնայ։

Ո՛հ, ա՛լ կ'երթամ, ամէն բան մտք քեզ մնայ, ինչպէս կ'երթան հէգ պարուն ու ծիծեռնակ, Կ'երթամ Թաղուիլ սննական խորը մինակ Լացն ու արցունք ինձի բաժին թող մնայ։

ԳՊՆԵՎԱՆՔՅԻ



(1) «Հիպպոլիտ Թրագրի» 1907 Յունվարի Թիւին մէջ. Միսիական գաղափարը Վիդի-լիոսի մէջ, խորագրով գեղեցիկ յօդուած մը կայ, ուր Հոմէրոսի պետութիւնը կը համարուի «Թրագրի նախնական նախակարգեալ» կամ երկրորդ նախնականութիւն ի մասին Քրիստոնէութեան ծաւալման։ Նոր գաղափար մը չէ այս, բայց կրնայ նօթագրուիլ։ Ազատ Թրագրութիւնը, աշխարհի այլեւայլ մասերուն մէջ, հնարաւոր ըրած էր նոր ճամբաներու շինութիւն, Թրագրութեան նոր սխաբէմ եւ կատարեալ զգուշ ցամաքային պատերազմի եւ ծովահէնութեան, եւ այս բաները որոնք Թրագրութեան զործակցութիւնը կը յատկանշեն, տեղի ունեցան պետութեան առաջին երեք դարերուն մէջ — ցայտուն դարաշրջան՝ ուր Քրիստոնէութիւնը աճեցաւ տիեզերական կրօնք մ'ըլլալու չափ։ Արդեօք, պատմական ուրիշ երեք դարերուն մէջ, տեսնուած է երբէք ասանկ ազատութիւն ճամբորդութեան։ Մենք, ի մասին Մեծ Լեւոն Պապի (440-461), կը կրկնենք ու կ'ըսենք այն բաները, որոնք մասին փրօֆ. Ֆրիմէնի կողմէ, շատ պերճաբար էջեր գրուած են կանոնադր. «Հոսկ ուրեմն Աստուծոյ անհատելի շնորհաց արդիւնքը պիտի ծաւալի աշխարհի ամէն կողմը։ Աստուածային նախնականութիւնը նախապէս առաջ բերաւ Հոմէրոսի իշխանութիւնը։ Հետեւաբար աշխարհի արդի պատմութեան մէջ, պէտք չէ վերադրենք Ամբրիկեան եւ Անգլիական նախնականութեան իշխանութիւն։

ՀԱՍԵՐԱԾԽՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ

— Խնդրեմ, պարո՛ն, ձեր ազգանունն ի՞նչ է.

= Չէրբէղեան:

— Չերի՞նք.

= Քիւրտեան:

— Չերի՞նք.

= Աճէմեան:

— Խնդրեմ ձերի՞նք.

= Թիւրքեան:

— Չերի՞նք, պարո՛ն.

= Լազեան:

— Ձեր ազգատունն ի՞նչ, է պարո՛ն.

= Արնաուտեան:

— Չերի՞նք, պարո՛ն.

= Արապեան:

— Չերի՞նք, խնդրեմ.

= Նեւցէ:

— Ձեր ազգանունն ի՞նչ է.

= Թիւրքմէնեան:

— Չերի՞նք, պարո՛ն.

= Մաճառեան:

— Խնդրեմ, ձերի՞նք.

= Ինկիլիզեան:

— Չերի՞նք, խնդրեմ.

= Թաթարեան:

— Չերի՞նք, պարո՛ն.

= Ապաղէեան:

— Պարո՛ն, ձերի՞նք.

= Կիւրճեան:

— Չերի՞նք, պարո՛ն.

= Հինտլեան:

— Խնդրեմ, պարո՛ն, ձերի՞նք.

= Ալշաբեան:

— Չերի՞նք, պարո՛ն.

= Մոսքովեան:

— Խնդրեմ, ձերի՞նք.

= Էրմէնեան:

Եւ այս զանազան զարհանազան տա-
րերց մէջ օր մը միութիւն, համերաշխու-
թիւն պիտի գոյանայ — եթէ Տէր կա-
մեացի
ԽԱԶԻԿ Յ. ՍԱՐԱՃԵԱՆ
Դաւրեժ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ "ՏԱՃԱՐ"

Տաճարի սնցեալ թիւերէն մէկուն մէջ
կարգացինք Այնթապէն Արժ. Տ. Գարեգին
քէն. Պողարեանի եռանդուն մէկ յօդուածը՝
սրաք յուղումով եւ կրօնական նախանձա-
խնդրութեամբ զրուած:

Համաժողով ենք Արժ. Տ. Հօր, եւ կը
ձայնակցինք իր խօսածներուն թէ՛ «Ե՛րբ
պիտի տեսնենք Տաճարը ժողովուրդ»ին
մէջ աւելի ծաւալած եւ առաւել պայծառ»,
եւ թէ «Ժողովուրդէն աւելի եկեղեցա-
կաններն են պատասխանատու»:

Ճիշդ է այդ. մենք հոգեւորականներս,
եթէ չենք հետաքրքրուիր հոգեւոր բանե-
րով, ժողովուրդէն ի՞նչ սպասելու ենք:

Եթէ ժամանակի սկիպտիկ հոսանքէն
ազդուած մեր ժողովուրդը սրաի ամբո-
խումներու եւ մաքի վրդովումներու մէջ
կը տարուբերի, եթէ հաւատքի լոյսը նը-
ւաղած՝ աւելածեալ պատրոյդի մը նման
ընդ աղօտ կը պլպլայ, եթէ սիրոյ հորը
իր բոցավառութիւնը կորսնցուցած է ու
փոքր կայծեր մոխրներու տակ միայն
պահուած կը մնան, եթէ յուսոյ կոթողը՝
շարժուած՝ փոփոխամտութիւններու մէջ
կ'երեքայ, եթէ սկիպտիկ հոսանքները
մրկող հակակրօն բռնապետները՝ փոշի-
ներով ծածկել եւ մթաքնել կը քանան
Աստուածապաշտութեան հորիզոնը, ու-
րեմն շատ ցործ բացուած է մեզ՝ հոգեւո-
րականներուն համար:

Ինչո՞ւ ուրեմն թմրութեան քունը պա-
սած է մեզ, ինչո՞ւ այսպէս խնկած, լքե-
ուած եւ կենդանի մոռեալներ զարձած ենք:
Հաղուսդէպ բացառութեամբ, մենք ան-
նպատակ կ'ապրինք. ոմանք զրօսանքի,
ոմանք աշխարհասիրութեան, ոմանք շա-
համուրթեան, եւ ոմանք այլ եւ այլ
հաճոյքներու հետեւելով, եւ շատերը նիւ-
թակաւի անբաւականութեան երեսէն՝
իրենց դաւաճաց հացը մտածելով, բարձի
թողի ըրած ենք մեր պարտականութիւն-
ները եւ մեր կոչումին պահանջն ու ձայ-
նը:

Սակայն ի՞նչ է ստոր պատճառը : Անմիաբանութիւնը՝ պարզապէս : Եղբայրսիրութիւնը այնքան պակասած է մեր մէջ, որ ոչ միայն մեր կոչման համաձայն չենք ուզեր վարուիլ, այլ իրարու հակառակ եւ փխստկար վարմունքի մէջ կը գտնուինք շատ անգամ, եւ չենք կրնար մտածել թէ այս վարմունքը հակառակ է նաեւ մեր պաշտօնին, եւ նոյն իսկ մեր անձին :

Եթէ առարկուի իսկ թէ մոզովութիւնը քաջակերութիւնը, յարգանքն եւ պաշտպանութիւնը չենք վայելեր եւ հանապազ կը հալածուինք, կամ կը զբոսորտուի՞ք, մենք դարձեալ պէտք չէ վհատինք, այլ պէտք է սթափինք մեր թրմութիւնէն, բարձրանանք, վեր ելնենք մեզ թուցնող ու ստորնայնող վհատութիւնէն, սիրենք ճշմարտութիւնը, ձեռք կարկառենք իրարու, միմեանք անկեղծ սիրով, խորհինք միաբան խորհրդով, գործենք միացեալ ուժով, պաշտպան հանդիսանանք Հայ Սոսքեղական Ս. Եկեղեցւոյ, եւ անոր կարգաց ու կանոնաց :

Եկեղեցական նուիրապետութեան օրէնքը յարգենք ու բարձր բռնենք զայն, Ազգ. Իշխանութիւնը պատուենք իր բոլոր ճիւղերով եւ պատկառ միանք անոր հանդէս : Հոս անարժանութեամբ կը փութամ ըսելու որ, եթէ մեր եկեղեցականութիւնը իր բարձրագոյն աստիճանէն սկսեալ մինչեւ վերջինը, իր քաջանշիւր զատակարգ եւ իր քաջանշիւր անգամ, իր վրայ գրուած պարտականութիւնը խղճամիտ քննարկով եւ աշխուրջ դործունէութեամբ եւ սիրով կատարէ, այն ասան լուծուած պիտի ըլլայ տմէն խնդիր, եւ պատկասելի կերպարանք մը պիտի զգենու Եկեղեցականութիւնը :

Լռելը փխստկար է. նախանձեանութիւն եւ աշխատութիւն պէտք է, շարժում, աշխոյժ եւ անձնուիրութիւն պէտք է, իւրաքանչիւր զատակարգ եւ իւրաքանչիւր անգամ, իր բնական տաղանդին, իր գիտութեան եւ մասաւոր կարողութեան աստիճանին համաձայն պէտք է գրէ, խօսի եւ գործէ : Ահա՛ այն ատեն պիտի ալ ձգսնալ եւ սլսիլ չըլտնայ Հայ Ս.

Եկեղեցին՝ իր միաբանեալ եւ միախոհ Եկեղեցականներով, ամուր բերդաքաղաքի մը նման. որով ա՛յլ չպիտի համարձակին մօտենալ անոր՝ ո եւ է հոսանքներ, մերթկներ ու փոթորիկներ, զի «Հինն ի վերայ վիմի հաստատեալ է :»

Նոյն ատեն ժողովութիւն ալ մաքի պղտորումները պիտի փարատին. կատարեալ հաւատքով ու ջերմեանով սիրով պիտի համախմբուի ընդ քաղցր հովանեաւ Ս. Եկեղեցւոյ, անանկու համար անոր հոգեւոր մոտենդէն, ուր պիտի բովանդակին Աստուածասիրութիւնը, Ազգասիրութիւնը, Հայրենասիրութիւնը եւ Մարդասիրութիւնը :

Եկեղեցականութեան եւ Եկեղեցին զօրացման եւ շարունակական պահպանման զօրաւոր ազդակ մը ըլլալու կոչուած է Տաճարը՝ թրքահայ միակ կրօնաթերթը որուն անհրաժեշտ է օժանդակել դրիչով, խօսքով ու գրամով : Ամէն եկեղեցական պէտք է ունենայ այդ թերթէն, եւ մըտադիւր հետեւի անոր օգտաշատ բովանդակութեան : Պէտք է աշխատի նաեւ ժողովրդեան մէջ ալ տարածել զայն, այն աստիճան որ թերթին օգտակարութիւնը չեղանելու համար, կարելի ըլլայ ընդարձակել անոր ծաւալը, կամ լաւ եւս շարաթը երկու անգամ հրատարակել :

Իպրոցներու մէջ կրօնքի դասերը շատ թոյլ կերպով կ'աւանդուին, եւ հարկ եղած կարեւորութիւնը չի տրուիր անոնց : Պէտք է այդ դասերը հմուտ, աշխատասէր եւ խղճամիտ ուսուցիչներու յանձնել. որպէս զի նոր սերունդէն համար հաւատոյ, երկիւղածութեան եւ ճշմարիտ ոտուածապաշտութեան պաշարը պատկաստուած ըլլայ :

Կարեւոր պարագայ մ'ալ Ընծայարանի խնդիրն է. պակասած քահանաներու տեղ նորեր ձեռնադրելու համար ընծայացու գտնելը շատ գժուարացած է, քիչ շատ կարողութիւն եւ կամ յարմարութիւն ունեցողները չեն ուզեր ձեռնադրուիլ, եւ կը մնան այնպիսիներ որոնք օգտակար ըլլալէ աւելի փխստկար պիտի ըլլային :

Ուստի ժամանակը կը պահանջէ որ,

ընծայարաններ լացողին կարեւոր կեղ-
րոններու մէջ : Այս պէտքը ստիպողական
է , բայց խնդրը Ազգին կեդրոնէն կա-
խում ունի , եւ իրեն կը մնայ պարտ ու
պատշաճ անօրէնութիւնը (") :

ՎԱՐԴԱՆ ԲԶՅ. ԶԱՐԱՐԵԱՆ

Երզնկա

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ԿԱՐՏԵՑԵԱԼ ՀԱՎԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Պատուարժան խմբագրութիւն

«Տանաւ» բառոյալից հանդեսի

Կարգացի Նաթանեան էֆէնտիի գրու-
թիւնը, ուր Ազգային Ժողովին կարծեց-
եալ մէկ հակառակութիւնը երեւան հանել
ուզած էր, քանի որ ձախակողմին բանա-
ձեւը ընդունուած եւ աջակողմին թեկնա-
ծուն կաթող. պատգամաւոր ընտրուած էր:
Ըստ իս որ եւ է հակառակութիւն չիկայ
այդ երկու. գործողութիւններուն մէջ,
քանի որ աջակողմին բանաձեւն ալ, — որ
չէ թէ մերժուեցաւ, այլ մեծամասնութիւն
չունեցաւ՝ պարզապէս քուէարկութեան
մէկ անակնկալ բերումովը, — ոչ միայն
տրամադծապէս հակառակ չէր, այլ նոյնիսկ
մեծ տարբերութիւն մը չէր ներկայացնէր
ձախակողմի բանաձեւէն: Արդարեւ թէքէ-
եանինը քիչ մը աւելի մանրամասնուած
ու տարածուն հանգամանք ունէր, բայց
երկուքն ալ այն եզրակացութեան եկած
էին, որ պատգամաւորը լիազօր եւ ազատ
ըլլալու էր իր քուէն ուզածին տալու, բա-
րոյակրան պարտականութիւն մը ունենա-
լով միայն քուէ չի տալու այն եկեղեցա-
կաններուն, որոնք ամբաստանութեան
տակ են եւ իրենց անձը ազգին մէջ երկ-
պառակութեան տեղի տուած է կամ կրը-
նայ տալ: Արդ, այս եզրակացութիւնը,
ինչպէս իմ խիղճիս, նոյնպէս վստահ եմ
թէ իմ պատկանած իմաստկութեանս

(") Իւրաքանչիւր զաւառի տառնորդներն ու
վանահայրերը մեծ դեր կրնան կատարել Ընծա-
յաններու բացման կարեւոր խնդրոյն մէջ. ըստ մեզ
ոխալ եւ անգործնական է անէն բան կեդրոնէն
սպասել :

Ծ. ԽՄԲ.

սկզբունքներուն ու տեսակէտներուն ալ
համաձայն է, որով որ եւ է զժուարտութեան
առջեւ կամ որ եւ է զազախարի զէմ դա-
ւելու (!) պարագային մէջ չեմ գտնէր ինք-
զինքս :

Ընդունեցէք այս առթիւ, կրկին, խո-
րին մեծարանցս հաւատարմութիւն :

Օ. ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ

Պոլիս 8/21 Նոյեմ. 1911

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳԻՆ

Մարդկային հոգին աշխարհի հայելի
մ'է :

* Հոգին պատարանքներ ունի ինչպէս
թռչունը թռչէր, այս է որ զինքը վեր կը
բարձրացնէ :

Վ. Հիւկօ

* Գիշերելի հոգի մը միշտ հիւրը չէ
գեղեցիկ մարմնոյ մը, բարեհնոր՝ մար-
մինները շատ հեղ թաղարդներ են որ
յիմարներ պակաս չեն բռնուելու համար :

* Հոգին ձեր առաջին խնամոյց կը
կարօտի. տուէ՛ք յետոյ մարմնոյն իր պա-
հանջած խնամքները որոնք միշտ ստորա-
դաս են հոգւոյն մշակութեան : Դրամը
պէտք է որ երբորդ եւ վերջին կարգը
բանէ :

Պղատն

* Նման թռչնոյն, հոգին քանի
բարձրանայ նոյնքան ուրախ կը լինի :
Մարդուն համար ճշմարիտ բարձրացում
մը չեմ գիտեր՝ հոգւոյ բարձրացումն զատու
Ընկերութեան տարբեր դասակարգերուն
համար արժանապատուութեան տարբեր
մեծականեր չկան ըստ : անիկայ մէկ հա-
տիկ է եւ նոյնն է ամենուն համար :
Միակ բարձրացումը կը կայանայ հոգւոյն
բարձրացոյն կարողութեանց եւ ազնուա-
գոյն սկզբանց, կորովին ծաւալման եւ
կիրաւման մէջ :

* Հոգւոյ բարձրութիւնը զգացում մ'է
փափուկ, վստահ՝ այն ամեն բանի համար
որ գեղեցիկ է, որ մեծ է. վաղվադակի
որոշումն է մեծագոյն բարիքն ընելու լա-
ւագոյն միջոցներով, մեծ բարեբարութե-
թիւն մը՝ մրացեալ մեծ ոյժի եւ մեծ խո-
նարհութեան :

* 2է կարելի բարձրացնել հոգիները առանց զանոնք ազատագրելու :

* Մարդիկ հաւասար են ոչ թէ մարմնով այլ հոգւով , եւ ժողովրդական պետութեանց մէջ ամեն մարդ որ ազատ հոգի մը ունենալուն համոզուած է , պէտք է որ ինքն իրմով կառավարուի :

* Եթէ հոգիդ լաւ վիճակի մէջ է , դու ունիս ամենէն պիտանի բանն երջանիկ բլլալու :

* Պէտք չէ խնդիր ընել թէ մարմինն ու հոգին միեւնոյն բանն են , ինչպէս որ պէտք չէ խնդիր ընել թէ կառելի վրայ միղդամոմն ու իր ստացած զիմպիծը նոյն բաներն են :

* Ինչ է պակաս այս մարդուն այն ամեն բանէն որ քարիփ կը կոչուի ի մարդիկ : Երջանիկ է իր ծնողներով , իր հայրենիքով . ազնիւ ծագում ունի , բարեկամներ , ազգականներ , հարստութիւն ունի . բայց այս ամեն բաները զանոնք կըրող հոգին չեն արժեք : Ասոնք բարիք են անո՞ր համար որ զիտէ օգտուել անոնցմէ , իսկ անո՞ր որ չարաչար կը դորձածէ զանոնք , չարիք են :

* Հոգին չունի զազանիք զոր լսւրքը երեւան չհանէ :

* Անկարելին փափաքիլ , անզգայ բլլալ ուրիշին չարեաց , առաքիլ երկու մեծ հիւանդութիւններ հոգեկան :

Ի Ն Ք Ն Ա Ճ Ա Ն Ա Յ ՈՒ Մ

Մանիւր զքեզ , զո՞ւ ինքդ :

* Խնամքի առաջինն է ուսանիլ , ինքզինքը ճանչել , զոր գերազոյն իմաստութիւնը կը պարտադրէ ամեն մահկանացուաց :

* Ամեն ուսումնասիրութենէ վեր դրնենք մեր անձին ուսումնասիրութիւնը : Ամեն ծանօթութիւններէ օգտակարագոյնն այն է , որ մեզ ճիշդ գաղափարներ կուտայ մեր անձին նկատմամբ եւ մեզ կ'ուսուցանէ ուղղիլ զմեզ :

* Մարդս՝ ինքն իրեն՝ իր մեծագոյն դասն եւ իր մեծագոյն տեսարանն է , եւ ուղղուիլ պիտանալու տոսջին պայմանն է անշուշտ զիտնալ ինքզինքը , ճանաչել :

* Անոնք որ իրենք զիրենք կը ճանչեն , այնպէս կրթուած են որ զիտեն ինչ որ իրենց կը պատշաճի , եւ իրերը կը զանազանեն որոնց կարող են կամ ոչ . գիտցածնին կ'ընեն եւ չունեցածնին կ'աշխատին ձեռք ձգելու . իրենց կարողութենէն վեր եղած բանէն կը հրաժարին , սխալներէ եւ թերութիւններէ կը զգուշանան :

* Մարդը մարդոց մէջ միայն կ'ուսանի ինքզինքը ճանչնալ . կեանքը կ'ուսուցանէ իւրաքանչիւրին ինչ որ է ինքը :

* Երբ մարդուն կ'ըսեն — ծանի՛ր զքեզ , լսի իր հպարտութիւնը խոնարհեցնելու համար չէ , այլ նաեւ իրեն գիտցնելու համար ինչ որ կ'արժէ :

* Եթէ կ'ուզես ճանչել եւ զնալ թէ ի՞նչ էս դու , զիտէ՛ — գերեզմաններն երբ քաղաքի մեծ պողոտային վրայ կը դրուուիս : Հոն են ոսկորներն ու թեթեւ փշիկներ թաղաւորներուն , բռնակալներուն , մեծ միտքերուն եւ անոնց որ հպարտ էին իրենց ծագումով , իրենց հաշակով եւ իրենց գեղեցկութեամբ : Եւ այս ամենուն՝ ժամանակը միջոց չտուաւ : Գերեզմանն հասարակաց ժամադրովայն է : Ուրիշն տե՛ս եւ խելամուտ եղի՛ր այսու այն դոյզըն ինչին զոր դու կ'արժես :

ԽԱՉԻՍԱՐ

ՌՈՒՍԱՋԱՅ ՄԱՄՈՒԼ

Կարողիկոսական ընտրութեան առիթով Ռուսահայ մամուլին մէջ բացուած պայքարը կը շարունակուի ա՛լ աւելի ուժգնութեամբ : Պայքարը սակայն , չառնոց զուրս ելած է քննադատութեան սահմաններէն եւ եղած է զուտ անձնականութեան խնդիր մը՝ զժրադպարար : Գլխաւորապէս Մշակ եւ Հորիզոն կաթողիկոսական ընտրութիւնը կարծես առիթ համարած են , իրենց անձնական հին հաշիւներու կարգադրութեան : Ուրախալի է որ հոս , ի Պոլիս , զոնէ կաթողիկոսական

խնդրոյն չուրջ Մամուլը համաձայն է գր-
րեթէ ամբողջութեամբ:

* Հանգուցեալ Տ. Մատթէոս Ս. Հայրա-
պետի տնուան ոտարեգարծին առթիւ, էջ-
մեծնայ Մայր Տաճարին մէջ Ա. Պա-
տարագ մատուցուած է: Պատարագէն ետք
գրեթէ ամբողջ Միաբանութիւնը հան-
գուցեալ Կաթողիկոսի գերեզմանին վրայ
մեծաշուք հողեհանդիստ կատարած է: Այս
սգահանգէսին ներկայ գտնուած են Վա-
ղարշապետի բոլոր գաղութներու ուսուցիչ-
ները, ձեմարանի աշակերտները եւ երկուս
հասարակութիւնը: Գերեզմանին վրայ,
ծաղիկներու մէջ դրուած է՝ Խաչ, Աւե-
տարան ու Կաթողիկոսական թաղը:

Մեր Ռուսահայ եղբայրները աւելի
երաստապարտութեամբ կը վերաբերուին
իրենց Պետերուն հանգէպ: Ցաւալի է որ,
հոս, կեդրոնի մէջ ո՛չ ոք, ոչ նոյն իսկ
Պատրիարքարանը իր մտքէն անցուց ասանկ
բան մը:

* Սինդը որոշեր է որ Կաթողիկո-
սական պատուիրակներ ընտրելու ժամա-
նակ յառաջ եկած բոլոր հարցերու մասին,
թեմական առաջնորդներու առած որոշու-
մը վերջնական պէտք է համարուի, առանց
նոյն իսկ բողոքի ենթարկուելու: Նոյնպէս
Սինդի որոշումով ստանդներուն ար-
գիլուած է մասնակցել Կաթողիկոսական
պատուիրակներու ընտրութեան:

* * Մոսկուայեան Կաթողիկոսական
պատուիրակ ընտրուած թիւի Շահնաշար-
եանի ընտրութեան գէմ բողոքներ եղած
են Սինդին: Այս առթիւ Մոսկուայի մէջ
գումարուած երկրորդ ժողովը չափազանց
աղմկալի եղած է: Ժողովէն ետք եկեղեց-
ւոյ բակին մէջ քիչ մնացեր է որ հակա-
ռակորդները իրարու վրայ յարձակին:

* Պ. Երուանդ Տ. Միմասեանի պատ-
ուիրակ ընտրուելուն դէմ Խաչն Ժողովի
առած որոշումը բուն բողոքներու տարի
առած է Ռուսահայոց մէջ: Պաթումէն
Մ. Ա. քն. Մելեան Մշակի միջոցաւ կը
բողոքէ այս վճիռն դէմ իբր անարդար, եւ
մշանդաձայն անհամապատասխան մեր Ե-
կեղեցւոյ սահմանադրական սրբոյն: «Իր
ազատ համբով հոգեւոր աստիճաններէ

հեռանալը բնաւ չի զրկեր Հայ զաւակը
Եկեղեցւոյ անդամ բլլալէ, եւ այն անդա-
մութեան հետ անբաժանորէն կապուած
իրաւունքներէ», կ'ըսէ Մելեան քննյ: Նմանօրինակ բողոքներ եղած են նաեւ
Մոսկուայէն եւ ուրիշ կեդրոններէ:

Նոյն ինքն Պ. Երուանդ Տ. Միմասեան
Մշակի մէջ մասնաւոր յօդուածով մը իր
մասին մամուլի միջոցաւ եղած ամբաս-
տանութիւնները՝ իբր անկրօն կամ լուսե-
րական՝ բոլորովին հերքելով, կը բողոքէ
իր ընտրութեան համար Խաչն Ժողովի
առած որոշման դէմ:

* * Մշակ մասնաւոր խմբագրականով
մը տեղակալ Սուրէնեան Արքեպի Կող-
կոսի փոխարքային քով կատարած մէկ
դիմումը նկարագրելով, ըսած էր թէ Սու-
րէնեան Արքեպ. խնդրած է փոխարքայէն
որ Կաթողիկոսական ընտրութիւնը քաջ
խելով կատարուի, եւ այս առթիւ որո-
շած նախորդ որոշումը եւ առումի Արք.
Հորիզոնի մէջ տեսնուած պաշտօնական
հեռագիր մը, — որ Տեղակալ Սուրէնեան
Սրբազանի հրամանով տրուած է — բոլո-
րովին կը հերքէ Հ. Առաքելեանի սոյն
ամբաստանութիւնը:

ԵԿԵՂԵՑԻՆ. ԵՒ ՊԵՏՍՈՒՄՆ ԿԵԱՆՔԸ.

— Անգլիացիները, կրնանք ըսել ամենէն
քաղաքակրթուած եւ զորքական ժողո-
վուրդը աշխարհի վրայ, զիտեն Եկեղե-
ցիին ալ իր արժանաւոր բաժինը հանել
տէրութեան վերին կազմակերպութեան
մէջ: Անգլիոյ Ճօրճ Ե. Թագաւորին եւ
էջ Թագուհոյն Հնչկաստան ուղեւորու-
թեան առթիւ, Ճօրճ Ե. Բացակայութեան
միջոցին վեհապետական իշխանութիւնն
ի գործ գնելիք պետական յանձնարումին
անդամակցութեան մէջ, Բօննօթի դուք-
սէն ետքը որ կը ներկայացնէ արքայա-
կան գերզատանը, կը գտնուի Բէնդրպը-
րիի արքեպիսկոպոսը, իբր ներկայացու-
ցիչ Անկլիքան Ազգ. եկեղեցւոյ. միւս եր-
կու անդամներն են Լորտերու Ժողովին
նախագահը եւ Պետական Խորհրդոյ նա-
խագահ Լորտ Մորի, որ Անգլիոյ մա-
ւորականութեան բարձրագոյն ներկայա-
ցուցիչը կրնայ համարուիլ: Աշխարհի ա-
մենէն աշխարհիկ եւ արդիական տէրու-
թեան կողմէ ինչ փառաւոր դաս ամեն
անոնց որ Եկեղեցիին դերը վերջացած կը
նկատեն ազգերու կեանքին մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՆՈՐ ԵՐԵՒՈՅԹ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՅՆ

Ազգ. Ժողովոյ անցեալ ուրբաթի նիստին մէջ ծանրակշիռ յայտնութիւն մը եղաւ՝ Ռուսիոյ Ներքին գործոց նախարարը՝ միառանդորդ ժամուն՝ հրամայած է որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան առթիւ իւրաքանչիւր քեւ՝ իր պատգամաւորն իր մեջքէն ընտրէ ու յրկե, եւ ոչ քե իր ձայնը յանձնէ քեւեկն զուտ քնակող մեկու մը: Այս հրամանը, ըստ ինքեան համաձայն Հայ Եկեղեցւոյ Ժողովրդական ոգւոյն, անհնար է գործադրել այս անգամ, ժամանակի բացարձակ սղութեան պատճառով. քանի որ թրքայ շատ մը թեմեր, հինէն ի վեր եղածին նման, այս անգամ ալ իրենց ներկայացուցիչ ընտրած են Ռուսահայեր՝ եկեղեցական թէ աշխարհական:

Խառն Ժողովը խնդրոյն ստիպողականութիւնը ի նկատ առնելով պաշտօն սուաւ իր Ս. Նախագահին՝ հարկ եղած հետազօտութիւնները կատարելու: Ըստ այսմ, Պատր. Գրիգորի Ե. Ղեւոնդ Ծ. վ. Դուբեան Ծր. օր Ռուս գեսպանատունը գնաց, ընկերակցութեամբ Փրանսերէնի քարաւղար Յ. Արիարէ Գ. ի, եւ զեպան Պ. Չարիքովի յայտնեց թէ կառավարական այս արգելքը ո՛րքան ծանր չիտնութիւններ յառաջ կը բերէ. ուստի անոր միջնորդութիւնը խնդրեց՝ նախկին ձեւով կատարելու համար ընտրութիւնը: Դեպքան յայտարարեց թէ Ռուս կառավարութիւնը ու եւ է ընտրելի չունի այս պաշտօնին, եւ կ'ուզէ որ Հայերը կատարեալ ազատութեամբ ընտրեն իրենց կաթողիկոսը. բայց կ'ենթադրէ թէ այս խնդիրը պատգամաւորներէ ունեց անձէն ծագում առած է, ուստի ցարկ ընտրուած պատգամաւորներուն ցանկը պահանջեց: Այդ ցանկը տրուելուն մէջ անպատեհութիւն մը չիտեսնուիր, բայց եթէ այս անտնական զօրութիւնը չհարթուի, կ'առաջարկուի որ կամ

մակալութեան յատուկ զօրծ. ուստի անցնելով Պատր. ընտրութեան, լսեց այս մասին ալ իր պատուիրակին տեղեկութիւնները, եւ իրաւունք չտեսաւ Միաբանութեան՝ եօթնանուն փակեալ ցանկէն ետքը եռանուն ցանկ մ'ալ պատրաստելու, որ ըստ Սահմանադրութեան Վարչութեան իրաւունքն է: Բայց այդ եռանուն ցանկը պատրաստելէ առաջ հարկ համարեց Երէցեան Ս. էն պահանջել իր Օսմ. հպատակ ըլլալն հաստատող փաստաթուղթերը:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ խնդրոց նկատմամբ Պատրիարքարան եղած զեկուցումը, խառն Ժողովոյ որոշմամբ, պիտի յանձնուի Միջազգային յանձնաժողովին, որ կը լսուի թէ զլստորաբար զինուորական խնդրոյն մէկ քանի մութ մտայած կէտերուն վրայ լուսարանութիւններ պիտի պահանջէ կառավարութեան, յառաջիկային թիւր միտնութեանց տեղի չտրուելու համար կարգ մը պաշտօնէից կողմէ: Պէտք պիտի զգացնէ նաեւ ճշգրիտ յանուն վարժարանաց ըլլալը նպատահաւարութեան պայմանները, Համալսարանի տեսնուած սեղմումներու չենթարկուելու համար յառաջիկային Ազգ. Պատրիարքարանին կողմէ այս յանձնաժողովին կը մասնակցեն Տք. Տաղաւարեան, Սմբատ Քեաթիկեան եւ Դր. Ֆէրհատ էֆէնդիները:

ՏՓՂԻՍԷՆ Բիւզանդիոնի կը հեռագրեն թէ Վրաստան-Իմերէթի թեմէն, որ կը բովանդակէ Տիգրա, Ախլա, Եղիսաբէթուպոլիս, Պաքու, Բօթի, Դուշէթի, Թելաւ, Յզնա, Քութայիս, Արդուին, Սօխում եւ Բորի քաղաքները, 98 պատուիրակներ պաշտօնական ժողով գումարելով կաթող. պատուիրակ ընտրած են փաստաւոր Յովհ. Սպէնտիարեանը, եւ իրեն փոխանորդ՝ բժիշկ Արտաշէս Շիւհանը: Ժողովը 21ի դէմ 74 ձայնով կաթող. միակ ընտրելի հռչակեց է Օրմանեան Ս.ը: ՊՐՈՒՍՍՅԻ առաջն. Տեղապահ Տ. Վարդան Վ. ի հետապնդման վրայ, կուսակալը հեռագրած է Իշնէկէօլի գալմագամին, որպէս զի բժիշկ զրկէ Եկնիճէ գիւղը, աւաղակ հետապնդող պաշտօնէից


ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿ

Գրաշարական շատ կարեւոր վրիպակ մը տեղի ունեցած է դժբաղդաբար Տաճարի ներկայ Կէրդ թիւին մէջ, էջերու սխալ կազմութեամբ մը:

710րդ էջի առաջին սիւնակէն ետք, երկրորդ սիւնակը շարունակութիւնը չէ անոր, Լուրերը իրենց կանոնաւոր շարունակութեամբ կարգալու համար պէտք է է նոյն էջի Ա. սիւնակէն ետք կարգալ 711րդ էջի Ա. սիւնակը՝ 6րդ տողէն սկսեալ, եւ շարունակել մինչեւ նոյն էջի Բ. սիւնակի 21րդ տողը, որմէ յետոյ ետ դառնալ 710րդ էջի Բ. սիւնակը, եւ զայն ամբողջացնելէ ետքը շարունակել 711րդ էջի Ա. սիւնակի հինգ տողերն ալ, եւ յետոյ անցնիլ նոյն էջի Բ. սիւնակի 22րդ տողը:

Այս կարեւոր վրիպակին համար ներում կը խնդրենք Պատ. Ընթերցողներէն, կ'արժէր վերստին տպել թերթը, քայց ժամանակի սղութիւնը չթոյլատրեց:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ “ՏԱՃԱՐ”Ի



կողմէ գանակոծուած եւ խոչտանդուած անմեղ անձերու վրայ քննութիւն կատարելով տեղեկագրելու համար իրեն : Տ. Վարդան Վ. անձամբ գացած էր արդէն այդ դիւղը եւ իր քննութեան արդիւնքը իմայեցածգումը պահանջուի կաթով. ընտրութեան, եւ կամ թրքահայ բոլոր թեմերը ետ կենան այդ ընտրութեան մասնակցութենէն : Ամէն պարագայի մէջ Տեղապահ Ս. Ը չուզելով առանձին գործել, խնդիրը նկատառութեանը յանձնեց իսկոն ժողովին, որ իր Զերեքարթիի նիստին մէջ ներկայի առաւ թէ նոր կարգադրութեամբ կէս առ կէս կը զեղչուին թրքահայոց ձայները, թէ անցեալին մէջ ալ թրքահայր իրենց ձայնը առած են Ռուսահայոց, թէ Պալատէնիային մէջ ընտ. խօսքը չկայ պատգամաւորին ուղղած իր թեմին բնակիչը ըլլալու, հետեւաբար կրնայ պընդել իր իրաւունքին վրայ, ուստի որոշեց այդ ուղղութեամբ ձեռդարկ ընել ոռւս գեապանական մօտ : Ըստ այսմ պապր. փոխանորդ Տ. Ղեւոնդ Մ. Վ. Վ. նոյն Նչ. օր ոռւս գեապանատունը տարաւ պատգամաւորաց ցանկը, որոնց անունները իր կառավարութեան պիտի զրկէ գեապանը, եւ առած պատասխանմ պիտի յաղորդէ Պատրիարքարանին :

Ա.Զ.Գ. ԺՈՂՈՎԻՆ անցեալ ուրբաթ օրուան նիստին սէջ Ներցեան Սրբազանի երեսփոխան ընտրուիլը բուն վիճաքանութեան ասիթ առաւ Ներցեան Ա. ի գէմ ծանր ամբաստանութիւններ ծայր տուն նորէն, եւ երկարատեւ կրակոտ ասուխաներէ ետքը սրոշուեցաւ : Խորհրդարանական Յանձնաժողովի մը քննութեան յանձնել անոր խնդիրը : Միւս կողմէ Տ. Տիրայր Մ. Վ. Մարգարեան գաւառ քաղաք ըլլալով, երեսփոխան հոչակուեցան միայն Տ. Գարբէլ Ա. Նոյսկ. Ճէվահիրճեան եւ Տ. Ղեւոնդ Մ. Վ. Դուրեան : Յաւալի է որ Հայոց թեմեան այս առիւնապալի օրերուն, Ազգ. Ժողովը սին վիճաքանութիւններով մամաւաճառ կ'ըլլայ, մինչ անդին հողային եւ այլ խնդիրներ անհրաժեշտ լուծումի մը կը կարօտին :

Կ. ՊՈԼՍՈՅ Պատր. ընտրութեան խըն-

դիրը Ազգ. Ժողովի օրակարգը անցած է, կը յուսանք որ յառաջիկայ նիստին վերջնական որոշում մը տրուելէ ետք, երկրորդ եւ վերջին նիստով մըն ալ ընտրուած կը տեսնենք Կ. Պոլսոյ Պատրիարքական ակթոնն արժանաւոր յաջորդը :

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Վարչական պատուիրակ Հայկ Էֆ. Խօճասարեան որ անցեալ շաբթու Պոլիս եկաւ, ուրբաթ օր իսկոն ժողովին պարզեց իր տեսութիւնները, ըսելով թէ Միարանութեան երմտական եւ մատակարարական գործերը պէտք է այլեւս խիստ հսկողութեան ենթարկել, որովհետեւ հաշիւներուն մէջ գտած է զեղծումներ եւ յոյր մատակարարութեան արգիւններ. երբ զեղծումներուն վերջ տրուին, այլեւս մատակարարութիւնը առնելով Միարանութեան ձեռքէն, վանքն առանց բացի կարելի է կառավարել : Խառն ժողովը չուզեց մանրամասնութեանց մէջ մանկ իրքիւ. երուողէ մի Նիւմտից ինացուցած : Իր պահանջումին վրայ կուսակալը բարեացակամ փութ կոտութիւն ցոյց կուտայ յանցալարտ ժանտարմաները պատժելու համար :

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ լուրեր կուգան դարձեալ դաւաններէն : Շատախի առաջն. փոխանորդը կը հեռագրէ թէ անդւոյն եւ չրջակայից Հայերուն վիճակը տաղնապալի է : Օրէ օր բռնութիւնները կ'աւելնան, եւ Միւր Մհէ եւ Սաիա հեծեալ արքանակինըով անվախ կը թալլեն դիւղերը : Հեռագիրը կ'աւելցնէ պրտակեղծք մանրամասնութիւններ : Միւս կողմէ Բաղէշէն կը հեռագրուի թէ Մուլթիի Խարթկու եւ Խըլկան գիւղացիները աւազակներու շարունակական սպանութիւններէն եւ գողութիւններէն սարսափահար՝ ամբողջովին քաղաք լեղուած են : Ասոնց ոչխարներն յափշտակուած, շատերու առնները թողւուած են, եւ Աւագ անունով անձ մ'ալ սպաննուած է : Կ'երեւայ թէ կառավարութիւնը այն ասին միայն ուշադրութիւն պիտի դարձնէ այդ կողմերը, երբ քաղաքական կնճիւ մ'ալ Արեւելքէն ծագի, ինչպէս կ'ազգարարէին նոյն իսկ թուրք թերթեր :

ՖԲԷՉՆՈՅԻ (Ամերիկա) Հայոց հոգեւոր հովիւ ընտրուեր է Պրոսպայի Առաջն. Տեազատահ Տ. Վարդան Վ. Գապարեան :

ՀԱՄԱՂՈՒՄՍԵՐ ԺՈՂՈՎՐ

Պոլսոյ Հայ Եկեղեցականութիւնը կը տրուէ ընթացք մը բռնեց Եւ. օր: Նոյն օրը, Համագումարը^(*) ընտրելէ հաքը իր դիւանը՝ (Աստուծոյն՝ Տ. Յովն. Ս. Արքեպ. Արշարունի, և Աստուծոյն Տ. Զարմայր ֆննյ. Կեղիւրեան), Տեղապահ Ս. Եր. կը նախագահէր, բացարձակ ժողովին գումարման նպատակը, հրաւիրելով ժողովականները՝ յառաջիկայ կաթող. ընտրութեան առթիւ յայտնելու իրենց կարծիքը: Տ. Գրիգորիս Մ. Վ. Պալաքեան շեշտեց թէ Թրքահայ Եկեղեցականութիւնը պէտք է հաստատէ իր դոյութիւնը, ցուցնելով թէ ինք ալ կը հետաքրքրուի այս միջոցին ազգն զբաղեցնող կաթող. խնդրով: Տ. Սահակ Մ. Վ. Օտապաչեան ըսաւ թէ Օրմանեան Ս. ի Կաթողիկոսացումը ցաւալի պատակաւններու դուռ պիտի բանայ, և Հայ Եկեղեցիներու մէջ նորընտիր Հայրապետին յիշատակութիւնը, փոխանակ խանդավառութիւն յառաջ բերելու, — ինչպէս եղաւ հոգեւոր իշխանի Ս. ի համար — զուգէ առթի տայ հրազէնը պայթելու: Իրեն ձայնակցեցան Տ. Արիստ. Վարժապետեան, Տ. Յուսէկ Բաշունի, Տ. Սուքիաս Պալքեան, Տ. Գեորգ Անանեան քհ. Հայրերը եւն. Իսկ Տ. Մաղաքիա Եպ. Տէրունեան պատասխանեց թէ Ազգ. Ժողովը, — որուն կ'անդամակցին կրօնականներ ալ —, իր բաղձանքը յայտնած է ծանօթ բանաձեւով: Միւս կողմէ Տ. Արսէն Մ. Վ. Վեհունի, Տ. Հրանտ Վ. Յովնատիւն եւն. կը պընդէին թէ Ժողովը պէտք չէ ժխտական կերպով արտայայտուի. այլ լաւագոյն է իր պատշաճ դատած ընտրելիները ներկայացնել: Հուսկ ուրիմ որոշուեցաւ տարբեր կարծիքները բանաձեւերով ներկայացնել: Երեք բանաձեւեր պատրաստուեցան: Ա. Տ. Սահակ Մ. Վ. ի կողմէ, զոր ստորագրած էին 14 Եկեղեցականներ, և որուն միացուեցաւ յետոյ Տ. Սուքիաս հօր Բ. բանաձեւը: Գ. Տ. պատրաստած էր Տ. Հրանտ Վ. Յովնատիւն, և կ'ըսէր թէ «Ժողովը առանց ժխտական կերպով ար-

տայայտուելու ո'ր և է թեկնածո ի մասին կը փախաքի միայն Հուսաւորչայ Գահուն վրայ աւանդել Եպիսկոպոս մը որ ազգին մեծամասնութեան համակրանքը կը վայելէ»: Այս վերջին բանաձեւը մուտ նըկատուելով, Տ. Հրանտ Վ. ըսաւ թէ «Ժողովը չի կրնար բռնել որ Օրմանեան Ս. մերժեցէք»: Ասոր վրայ նոյն բանաձեւը ստորագրող 4—5 Եկեղեցականներէ ոմանք ետ առին իրենց ստորագրութիւնը եւ բանաձեւը ստացաւ 9 քուէ միայն, և միւս բանաձեւը ընդունուեցաւ ներկայ 27 Եկեղեցականներու (միւսները մեկնած էին) 20ին ձեռամբարձ քուէով: Ահա այդ բանաձեւը.

«Թուրքիոյ Հայոց Եկեղեցականաց Համագումար Ժողովս, բոս Ազգ. Սահմանադրութեան 29րդ յօդուածի կազմեալ մայրաքաղաքս գտնուող Ս. Եպիսկոպոսներէ, քաղաքի վարդապետներէ եւ Ս. Եկեղեցեաց Աւագներէ եւ Արքեպիս քահանաներէ, այսօր, Նոյ. 10 Եւ., ճիշտ գումարելով Ազգ. Պատրիարքանի մէջ, Եկեղ. առաւ նախկին Պատրիարք Տ. Մաղաքիա Արքեպ. Օրմանեանը կարողիկոսացնելու համար միջոց բռնելով պայքարը, որ հետզհետէ ծանր հետեւան կ'ունենայ, եւ ուսադրութեան առնելով Կովկասէն մի քանի քեմերու կրօնականներու եւ աշխարհականներու կողմէ Ազգ. Ընդհ. Ժողովին եղած մեկէ աւելի դիմումները, ստիպողական գտաւ դիմել Ս. Եւքիստի Կաթող. ընտրութեան համագալին Պատրիարքութեան Ժողովին, եւ առաջարկել իսպառման Տ. Մաղաքիա Արքեպ. Օրմանեանի կաթող. քեկնածութիւնը, Եկեղ. ունենալով Ազգ. Ժողովի բանաձեւը, բազմաչափ Հայ Եկեղեցական Եկեղեցիներէ վերջելու համար վերահաս անաւարտ պառակտումներէ»:

Արտոնատէր ՀԱՄԱՅՆԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՏԵԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵՂԻՒՐԵԱՆ

ՏՊԵՐԱՆ Տ. ՏՕՂԵԱՄԱՆԵԱՆ

(*) 60 հրաւիրեալներէ 37ը ներկայ էր:

ՕՍՄ. ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

شركة تجارية عثمانية

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ Կ. ՊՈԼԻՍ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ ԱՌԺԱՄԵԱՅ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԵՆ

ՍԹԱՆԳՈՒԼ, ԴԱԹԵՐՃԵՕՂԱՌԻ ԽԱՆ

Հայկական սոյն զրամական հաստատութիւնը կ'ընէ փոխառութիւններ՝ առեւտրական առմանքու, մուրհակներու, փոխանակագիրներու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու եւ բեռնագիրներու վրայ:

Կուտայ չէքեր, վարկագիրներ, փոխանակագիրներ եւ հեռագրական վճարումք հրամաններ՝ ինչպէս Թուրքիոյ նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը գնէ եւ կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր եւ պարտաթուղթեր, թէ՛ մեր եւ թէ՛ բոլոր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս եւ օտար դրամներ:

Կը գանձէ եւ կը ղեղչէ առեւտրական տոմսեր, մուրհակներ, փոխանակագիրներ, բաժնեթուղթեր եւ կտրօններ:

Կ'ընդունի զրամական աւանդներ նպաստաւոր պայմաններով:

Դրամատունս հաստատած է Ս.սեւտր. տեղեկութիւններու համար լաւագոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեծ հաւնայնիկն մեջ քաջաշէնքու համար կ'ընդունի

խանութիւն (25) դրուշէն սկսելով գումարներ

Դրամատունս կը կտտարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ եւ թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու եւ ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում եւ արտածում:

Կ'ընդունի ներկայացուցութիւն թէ՛ տեղական եւ թէ՛ օտար տուններու:

Կը կազմէ առեւտրական եւ ճարտարարուեստական ընկերութիւններ եւ կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրօգուտ շինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:

ՊԱՅՈՒՆԻ ՏԱՐԱԳՈՅՈՒՄ

Կազմեց՝ ՍՍ. ՀԱՆ. ՄԵՍՐՈՊ

Բոլոր անոնք որ ունին Հայկական ոգի ու կարօտ մը դէպի դաւանած Հայրենիքը, բոլոր անոնք որ կ'ուզեն վերադարձի հայրենի հողին՝ բարբառումը հիշելու, Սէրը ու Տոռալովները, թող չտապեն դնել «Հայրենի Տարեցոյց»ը, որ շարունակութիւնն է «Գաւառին տարեցոյցը»ին եւ կուգայ մեծ պակաս մը լեցնելու: Աննախնայ թափններով, 70է աւելի նոր պատկերներով, գրական, գիտական, ընկերական պէսպիսի ու անթիւ նիւթերով ճոխացած այս Նոր Տարուան գիրքը ՀԱՅԵԼԻՆ է Հայ Սրտին ու մտքին:

Գին՝ 7 դահեկան: Դիմել՝ գրավաճառներուն, բոլոր ծխավաճառներուն եւ հեղինակին՝ Չափնաճիւղյար, Մեծ Նոր Խան, Թիւ 45:

ԱՄՍՍԻԱ, Գաւառացիներու կիսամետաղ հանդէսը:— Հրատարակուի սկսաւ Հոկտ. 15ին, նպատակ ունենալով «առանց ազգի, կրօնի եւ ցեղի խտրութեան հետաքրքրուիլ գաւառի գործունէութիւնով, լալ աւելի դիտել, ներբողել անոր յաջողութիւնները, բողոքի ձայն բարձրացնել զայն կեղծանդու ընտելութիւններու դէմ»: Խոստովանելից հրատարակութիւն մը, որուն 16 էջերու 4-5ը յատկացուած են թրքատու թուրքերէնի: Տարեկան բաժնեգին մէկ մէճիտ, Արտասահման 5 փր. և Հասցէ՝ Խնդրադրութիւն «Ամասիա» կիսամետաղ հանդէսի, ԱՄՍՍԻԱ:

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ:— Գրեց՝ Սոկրատ Խան Մ. Գեղեթեանց: 72 էջերէ բաղկացած հատորիկ մը, ուր կ'ուսումնասիրուի եւ կը ներբողուի Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան աշխարհայեացքը՝ ընդդէմ Հայ Սահմ. Ռաւակաւոր Կուսակցութեան Գին 3 դրշ., Հրատ. Կոնստի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿԱՆԱՅԵԼ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԵՐ

Գրական կոչումի յոյժեղանքն Կոնստ. իր բոճանայ եղբայրակիցներուն Կոնստ.

Հրատարակ ելաւ վերջապէս քանի ամիսներէ ի վեր սպասուած այս գործը, ուր թրքահայ գրականութեան ամէնէն համբաւաւոր ներկայացուցիչները՝ Ա. Զոպանեան, Գ. Զոհրապ, Գ. Ֆեւրեան, Հրանդ, Զիֆթէ Սարաֆ, Ե. Օտեան եւն. եւն. կ'ուսումնասիրեն վարպետ իր տաղանդի բոլոր փուլերուն մէջ եւս, քննադատական ուսումնասիրութեան եւ գրական հոյակապ էջերով, 308 մեծագիր էջեր, Օ. Արդուման չքեղ տպագրութեամբ, ընտիր թուղթի վրայ, Գին 15 դրշ., կամ 1ու կէս բուրձի Հրատարակութիւն Պաշենց գրասան:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԳԱՆՁԱՐԱՆ

Բարձրագոյն դասընթացի

Ծանօթ գրադէտին ընթերցանութեան այս դասընթացին տարրական եւ միջին հաստիները այնքան ջերմ ընդունելութիւն գտան՝ հազիւ մէկ երկու տարուան մէջ երրորդ տպագրութիւն հասնելով, Ներկայ բարձրագոյն դասընթացքը խոստովանելի կրնանք նկատել թրքահայ եւ Ռուսահայ գրականութեան լաւագոյն էջերուն: Հեղինակներու կենսագրութիւններն ու պատկերները, բնաշխարհի շուրջը պատկերներ, հանրագիտական բացատրութիւններ, եւն. յանկոյցիչ եւ շատ օգտակար հրատարակութիւն մը կը հանդիսացնեն այս աշխատութեան գործը: 500 էջ, 12ու կէս դրշ., Հրատարակութիւն Յ. Գրքնանեան գրատան:

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Յ. ՏՕՂԱՄԱՆԵԱՆ

Սուրբան-Հանում Մօլա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ